ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

«___»_____ 2020 թ. N _____-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՁԵՌՔԲԵՐՎԵԼԻՔ ՏՈՀՄԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԱՐԺԵՔԻ ՄԱՍՆԱԿԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 966-Ն, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-Ի N 331-Ն, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 38-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տոհմային անասնաբուծության մասին» օրենքի 4-րդ հոդվածի «է» կետի և 7-րդ հոդվածի դրույթները, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 3-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել Արցախի Հանրապետությունում ձեռքբերվելիք տոհմային կենդանիների արժեքի մասնակի սուբսիդավորման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը՝ տնտեսական տարին ավարտելուց հետո՝ մեկամսյա ժամկետում Արցախի Հանրապետության կառավարություն ներկայացնել հաշվետվություն՝ կատարած աշխատանքների և իրականացրած միջոցառումների մասին:

3. Ուժը կորցրած ճանաչել՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 30-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ձեռքբերվելիք տոհմային ցուլերի արժեքի մասնակի սուբսիդավորման կարգը հաստատելու մասին» N 966-Ն որոշումը.

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 23-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ձեռքբերվելիք տոհմային ցածր մթերատու կովերի արժեքի մասնակի սուբսիդավորման կարգը հաստատելու մասին» N 331-Ն որոշումը.

3) Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 10-ի «Արցախի Հանրապետությունում ձեռքբերվելիք տոհմային հորթերի, տոհմային մատղաշների և տոհմային երինջների արժեքի մասնակի սուբսիդավորման կարգը հաստատելու մասին» N 38-Ն որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ***Բ.ՍԱՀԱԿՅԱՆ***

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԹԵՐԹ
ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է՝

Հ/Հ	ՇԱՀԱԳՐԳԻՌ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆԸ	ՂԵԿԱՎԱՐԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ	ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	ԹՎԱԳՐՈՒՄԸ
1.	ԱՀ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ	Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ		
2.	ԱՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ		
3.	ԱՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ		
4.	ԱՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ	Ա. ԼԱՉԱՐՅԱՆ		

*Առաջարկությունները և առարկությունները՝*_____

_____

_____

_____

_____

_____

_____

Նախագիծը ներկայացնողը՝
ԱՀ գյուղատնտեսության նախարար *Ժ. Միրզոյան*

«____» _____ 2020 թ.

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2020 թվականի _____-ի
N _____ -Ն որոշման

Կ Ա Ր Գ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՁԵՌՔԲԵՐՎԵԼԻՔ ՏՈՀՄԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԱՐԺԵՔԻ ՄԱՍՆԱԿԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կանոնակարգվում են տեղական նախրի բարելավման և մթերատվության բարձրացման նպատակով Արցախի Հանրապետությունում ձեռքբերվելիք տոհմային ցուլերի, տոհմային կովերի, տոհմային հորթերի, տոհմային մատղաշների և տոհմային երինջների (միասին այսուհետ՝ տոհմային կենդանի) արժեքի մասնակի սուբսիդավորմանն ուղղված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի իմաստով օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) ***հայտատու՝*** տոհմային կենդանի ձեռք բերելու նպատակով համայնքը սպասարկող անասնաբույժներին դիմած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր.

2) ***տոհմային ցուլ՝*** փաստաթղթով ծագումը վավերացված, բոնիտավորման արդյունքում վերարտադրության համար պիտանի և սահմանված կարգով գրանցված խոշոր եղջերավոր կենդանիների ջերսեյ, ֆլեկվի, շվից և այլ ցեղատեսակների բարձրարժեք արու առանձնյակ, ընդ որում ջերսեյ ցեղատեսակինը՝ ոչ պակաս, քան 230 կիլոգրամ, ֆլեկվի, շվից և այլ ցեղատեսակներինը՝ ոչ պակաս, քան 280 կիլոգրամ կենդանի քաշով.

3) ***տոհմային կովեր՝*** բոնիտավորման արդյունքում 100 բալային սանդղակով 64 և ցածր բալ ստացած, պարտադիր հղի (3-5 ամսական հղիություն՝ ստուգված լաբորատոր հետազոտությամբ), 3-8 տարեկան ջերսեյ, ֆլեկվի, շվից և այլ ցեղատեսակների կովերը, որոնք մթերատու հատկություններով գերազանցում են տեղական կովերին.

4) ***տոհմային երինջ՝*** սահմանված կարգով գրանցված խոշոր եղջերավոր կենդանիների ջերսեյ, ֆլեկվի, շվից և այլ ցեղատեսակներին պատկանող տավարի ընդհանրապես չծննդաբերած հղի (3-5 ամսական հղիություն՝ ստուգված լաբորատոր հետազոտությամբ) էգ առանձնյակ.

5) ***տոհմային հորթ՝*** սահմանված կարգով գրանցված խոշոր եղջերավոր կենդանիների ջերսեյ, ֆլեկվի, շվից և այլ ցեղատեսակների կովերից ստացված մաքրացեղ էգ և արու առանձնյակներ՝ մեկից հինգ ամսական.

6) ***տոհմային մատղաշ՝*** կաթնային կերակրման շրջանը վերջացրած հինգ ամսականից բարձր տարիքի խոշոր եղջերավոր կենդանիների ջերսեյ, ֆլեկվի, շվից և այլ ցեղատեսակների էգ և արու առանձնյակներ.

7) ***տոհմային կենդանու արժեք՝*** տոհմային կենդանու կենդանի քաշի 97 տոկոսը (3 տոկոսը չի հաշվարկվում՝ հաշվի առնելով կենդանու աղեստամոքսային ուղու պարունակությունը) բազմապատկած շուկայական գնով.

8) ***տոհմային կենդանու արժեքի մասնակի սուբսիդավորում՝*** տոհմային կենդանիների արժեքի մասնակի փոխհատուցում.

9) ***փակ պահվածք՝*** անասնապահական մթերքների արտադրության շահավետ կազմակերպման, արտադրության ծավալի ավելացման, կենդանիների մթերատվության բարձրացման, նրանց անկորուստ վերարտադրությունն ապահովելու նպատակով խոշոր եղջերավոր կենդանին ամբողջ տարվա ընթացքում անասնաշենքերում և կից մեկուսացված տարածքում պահելը՝ բացառելով կենդանու տեղափոխումը հեռավոր արոտներ, բացառությամբ աբերդին անգուս և հոլովեյ ցեղատեսակներին պատկանող տոհմային կենդանիների:

II. ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն) համակարգում և վերահսկողություն է իրականացնում միջոցառման իրականացման գործընթացի նկատմամբ:

4. Հայտատուները նախարարության կողմից նշված ժամկետում տվյալ համայնքը սպասարկող անասնաբույժներին են ներկայացնում հայտ՝ համաձայն N 1 ձևի՝ նշելով գործունեության իրականացման վայրի, պայմանների ու տոհմային կենդանիների պահանջարկի մասին տեղեկությունները:

5. Արցախի Հանրապետության անասնաբուժական սպասարկման կայանները (այսուհետ՝ կայաններ), համայնքային անասնաբույժներին ներկայացրած հայտերի հիման վրա՝ նախարարության կողմից սահմանած ժամկետում նախարարություն են ներկայացնում տեղեկություններ՝ համաձայն N 2 ձևի՝ նշելով գործունեության վայրը (համայնքը, գյուղը), հայտատուների տվյալները (անունը, ազգանունը, հայրանունը, անվանումը, անձնագրային տվյալները, հեռախոսահամարը), տնօրինող գլխաքանակը և ձեռքբերման ենթակա տոհմային կենդանու ցեղը և քանակը:

6. Արցախի Հանրապետությունում տոհմային կենդանիների անասնաբուծություն իրականացնող ընկերությունները յուրաքանչյուր եռամսյակ, մինչև տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը նախարարություն են ներկայացնում սույն կարգի պահանջները բավարորող իրացման ենթակա տոհմային կենդանիների մասին տեղեկությունները՝ համաձայն N 3 ձևի:

7. Մասնակի սուբսիդավորման ենթակա է ձեռքբերվելիք տոհմային կենդանու արժեքի 35 տոկոսը: Տոհմային կենդանու արժեքի 22,75 տոկոսը իրավաբանական կամ

ֆիզիկական անձանց կողմից վճարվում է որպես կանխավճար, իսկ մնացած 42,25 տոկոսը տրամադրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) միջոցով, անտոկոս փոխառության տեսքով ՝

1) երեք տարի մարման ժամկետով և տոհմային ցուլը երեք տարի փակ պահվածքով (բացառությամբ աբերդին անգուս և հոլովեյ ցեղատեսակներին պատկանող տոհմային ցուլերի) պարտադիր պահելու պայմանով.

2) երեք տարի մարման ժամկետով, տոհմային կովը երկու տարի փակ պահվածքով (բացառությամբ աբերդին անգուս և հոլովեյ ցեղատեսակներին պատկանող տոհմային կովերի) պահելու և տոհմային կովերից սերունդ ստանալու պարտադիր պայմանով.

3) տոհմային հորթ, տոհմային մատղաշ և (կամ) տոհմային երինջ ձեռք բերելու դեպքում՝ երեք տարի մարման ժամկետով և տոհմային հորթը, տոհմային մատղաշը և տոհմային երինջը երեք տարի փակ պահվածքով (բացառությամբ աբերդին անգուս և հոլովեյ ցեղատեսակներին պատկանող տոհմային հորթերի, մատղաշների, երինջների) պարտադիր պահելու պայմանով:

8. Իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից կանխավճարն վճարվում է հիմնադրամին՝ անտոկոս փոխառության պայմանգրերը կնքելու պահին:

9. Նախարարությունը, սույն կարգի 5-րդ կետում նշված տեղեկությունները ստանալուց հետո տասնօրյա ժամկետում ընդհանրացնում և դրանց հիման վրա հիմնադրամ է ներկայացնում տեղեկություններ՝ տոհմային ցուլերի ձեռքբերման պահանջարկի մասին:

10. Տոհմային կենդանուն սույն կարգի 7-րդ կետում նշված ժամկետներում փակ պահվածքով չպահելու, տոհմային կովի դեպքում նաև սերունդ չստանալու կամ անփույթ պահելու հետևանքով տոհմային կենդանու անկման դեպքում հայտատուների կողմից տոհմային կենդանու ձեռքբերման համար տրամադրված փոխառության գումարը՝ հաշվանցած մինչև այդ մարված փոխառության գումարը, ինչպես նաև տոհմային կենդանու արժեքի սուբսիդավորված մասը ենթակա են վերադարձման պետական բյուջե երեք ամսվա ընթացքում:

Փակ պահվածքի դրույթը չի տարածվում աբերդին անգուս և հոլովեյ ցեղատեսակներին պատկանող տոհմային կենդանիների վրա:

Տոհմային կենդանու հարկադիր սպանդը կամ հիվանդության պատճառով խոտանումը պետք է հիմնավորված լինի համայնքը սպասարկող անասնաբույժի ակտով:

Տոհմային կենդանու անկումից և (կամ) սանիտարական սպանդից, կամ օտարումից հետո ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում հայտատուն տեղեկացնում է համայնքն սպասարկող անասնաբույժին, վերջինս էլ 24 ժամվա ընթացքում տվյալ շրջանի անասնաբուժական սպասարկման կայանին, որն էլ 48 ժամվա ընթացքում նախարարություն է ներկայացնում տեղեկատվություն՝ դրան կցելով համայնքն սպասարկող անասնաբույժի կողմից տրվող տեղեկանքը մինչև անկումն իրականացված բուժկանխարգելիչ միջոցառումների և ակտ ու

այլ անհրաժեշտ փաստաթղթեր տոհմային կենդանու անկման և (կամ) սանիտարական սպանդի կամ օտարման վերաբերյալ:

11. Սույն կարգի շրջանակներում հայտատուներին տոհմային ցուլերը տրամադրվում են 10 գլուխ կովին և (կամ) երինջին 1 գլուխ տոհմային ցուլ հարաբերակցությամբ, իսկ տոհմային արու հորթերը և (կամ) արու մատղաշները՝ 10 գլուխ կովին և (կամ) երինջին և (կամ) էգ հորթին և (կամ) էգ մատղաշին 3 գլուխ տոհմային արու հորթ և (կամ) արու մատղաշ հարաբերակցությամբ:

12. Հիմնադրամը՝

1) Արցախի Հանրապետությունում տոհմային կենդանիների անասնաբուծություն իրականացնող ընկերությունների հետ կնքում է տոհմային կենդանիների ձեռքբերման պայմանագրեր.

2) հիմք ընդունելով սույն կարգի 9-րդ կետում նշված տեղեկությունները՝ հայտատուների հետ կնքում է տոհմային կենդանիների ձեռքբերման համար անտոկոս փոխառության պայմանագրեր՝ նախատեսելով սույն կարգի 7-րդ կետից բխող պայմանների կատարումը սահմանող դրույթներ.

3) յուրաքանչյուր խմբաքանակի տրամադրումից հետո, տասնօրյա ժամկետում նախարարություն է ներկայացնում տեղեկություններ տոհմային կենդանիների ձեռքբերման և անտոկոս փոխառությունների տրամադրման ուղղությամբ կատարած աշխատանքների մասին:

13. Նախարարությունը՝ հիմք ընդունելով սույն կարգի 12-րդ կետի 3-րդ ենթակետում նշված տեղեկությունները, իրականացնում է սույն կարգի 7-րդ կետում նշված սուբսիդավորումը՝ հիմնադրամին տրամադրելով անհրաժեշտ ֆինանսական միջոցներ յուրաքանչյուր տարվա պետական բյուջեում նախատեսված համապատասխան միջոցներից:

14. Գործունեության իրականացման վայրի փոփոխության դեպքում հայտատուները պարտավոր են գրավոր տեղեկացնել համայնքը սպասարկող անասնաբույժներին, իսկ համայնքը սպասարկող անասնաբույժները՝ կայաններին:

15. Կայանները՝ յուրաքանչյուր ամիս, մինչև տվյալ ամսվանը հաջորդող ամսվա տասը, նախարարություն են ներկայացնում տեղեկություններ՝ անասնաբուծության զարգացման և մթերատվության բարձրացման նպատակով տրամադրված տոհմային կենդանիների և ստացված խառնածինների մասին՝ համաձայն N 4 ձևի:

III. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ

16. Սույն կարգի շրջանակներում մշտադիտարկումն իրականացնում է նախարարությունը՝ նախարարության աշխատակազմի գյուղատնտեսական ծրագրերի մոնիթորինգի և վերլուծության բաժնի (այսուհետ՝ բաժին) միջոցով:

17. Արցախի Հանրապետությունում արժեքի մասնակի սուբսիդավորմամբ տոհմային կենդանիների ձեռքբերման հայտերի ամփոփման արդյունքում նախարարությունում

ձևավորվում է վիճակագրական տվյալների բազա, որը ներառում է ծրագրի իրականացման հետ կապված տեղեկատվությունը, արձանագրված խնդիրները և իրագործման դժվարությունները:

18. Հիմնադրամի կողմից սույն կարգի շրջանակներում մշտադիտարկումն իրականացվում է համաձայն վերջինիս իրավական ակտերի (ընթացակարգերի), ընդ որում, առաջին մշտադիտարկումն իրականացվում է անտոկոս փոխառությունը տրամադրելուց հետո երկու ամսվա ընթացքում, այնուհետև կիսամյակը մեկ անգամ:

19. Նախարարությունը, բաժնի կողմից իրականացված մշտադիտարկման արդյունքում հայտատուի կողմից սույն կարգի պահանջների չիրագործման կամ ներկայացված կեղծ տեղեկատվության ի հայտ գալու դեպքում, տոհմային կենդանիների արժեքի սուբսիդավորված մասը պետական բյուջե վերադարձման գործընթացն կազմակերպելու նպատակով տեղեկություններ է ներակայացնում հիմնադրամ:

20. Հիմնադրամի կողմից իրականացված մշտադիտարկման արդյունքում հայտատուի կողմից անտոկոս փոխառությամբ տրամադրված ֆինանսական միջոցների ոչ նպատակային օգտագործման կամ ներկայացված կեղծ տեղեկատվության ի հայտ գալու դեպքում տոհմային կենդանու ձեռքբերման համար տրամադրված փոխառության գումարը՝ հաշվանցած մինչև այդ մարված փոխառության գումարը, ինչպես նաև տոհմային կենդանու արժեքի սուբսիդավորված մասը ենթակա են վերադարձման պետական բյուջե խախտումը հայտնաբերելուց երեք ամսվա ընթացքում:

21. Հիմնադրամը յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո, մինչև տվյալ կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը նախարարություն է ներկայացնում հաշվետվություն:

22. Սույն կարգի 21-րդ կետում նշված հաշվետվությունը ներառում է մանրամասն տեղեկատվություն միջոցառման իրականացման գործընթացի մասին, այդ թվում՝

1) անտոկոս փոխառությունների մասին տեղեկատվություն՝ ըստ շրջանների և համայնքների՝ անտոկոս փոխառության պայմանագրերի քանակը, գումարը, տոհմային կենդանիների արժեքի սուբսիդավորման գումարը.

2) տեղեկատվություն հիմնադրամի կողմից իրականացված մշտադիտարկման արդյունքների և հայտնաբերված խախտումների մասին:

III. ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

23. Արցախի Հանրապետությունում ձեռքբերվելիք տոհմային կենդանիների արժեքի մասնակի սուբսիդավորման գործընթացի իրականացումից ակնկալվող արդյունքներն են՝

1) կենդանիների մթերատվության մակարդակի բարձրացում.

2) բարելավված և տոհմային բարձր մթերատու հատկանիշներով օժտված տնտեսությունների ցանցի ձևավորում.

3) անասնաբուծության վարման ինտենսիվ տեխնոլոգիաների ներդրման հնարավորություն.

4) գյուղական վայրերում վերամշակման նոր ձեռնարկությունների ստեղծման համար նպաստավոր պայմանների ապահովում.

5) անասնաբուծության մասնագիտացման շնորհիվ բնական կերահանդակների առավել արդյունավետ օգտագործում.

6) գյուղական վայրերում նոր աշխատատեղերի ստեղծում.

7) անասնաբուծական մթերքների ինքնաբավության մակարդակի բարձրացում:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ***Ա. ԼԱԶԱՐՅԱՆ***

ՁԵՎ N 1

ՀԱՅՏ

Դիմող _____
(ֆիզիկական կամ իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր)

_____

Բնակության վայրը (գտնվելու վայրը)
հեռախոսահամարը _____
Անձնագրի և հանրային ծառայությունների համարանիշի
կամ սոցիալական քարտի համարը_____
Գործունեության իրականացման վայրը _____
Դիմում եմ Ձեզ Արցախի Հանրապետությունում ձեռքբերվելիք տոհմային կենդանիների արժեքի մասնակի սուբսիդավորման կարգի համաձայն

_____
(տոհմային ցուլի, տոհմային կովի, տոհմային հորթի (տոհմային մատղաշի, տոհմային երինջի) ցեղը և քանակը)

ձեռք բերելու նպատակով:

Հայտին կից ներկայացվում են՝

1._____
2._____
3._____
4._____
5._____
6._____

_____ _____
(անուն, ազգանուն (անվանում)) (ստորագրությունը)

Կ.Տ.

«____» _____ 20___ թ.

Ձև N 2

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ _____ շրջանում անասնաբուծության զարգացման և մթերատվության բարձրացման նպատակով տոհմային կենդանի ձեռք բերելու համար դիմած հայտատուների մասին

Հ/Հ	Հայտատուի Ա.Ա.Հ. (անվանումը)	Գործունեության վայրը՝ համայնք, գյուղ	Անձնագրային տվյալները	Հեռախոսահամարը	Տնօրինվող խ.ե.կ. քանակը (գլուխ)	որից՝ կով, երինջ (գլուխ)	Անհրաժեշտ տոհմային կենդանու ցեղը	Անհրաժեշտ տոհմային կենդանիների քանակը (գլուխ)	Ծանոթություն

Անասնաբուժական սպասարկման կայանի տնօրեն՝ _____

Ա.Ա.Հ.

Կ.Տ.

Ձև N 3

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

_____-ի կողմից

(Արցախի Հանրապետությունում տոհմային կենդանիների անասնաբուծություն իրականացնող ընկերության անվանումը)

իրացման ենթակա տոհմային կենդանիների վերաբերյալ

Հ/Հ	*Տոհմային կենդանու համարը*	*Տոհմային կենդանու ցեղատեսակը*	*Տոհմային կովի տարիքը*	*Տոհմային կովի բոնիտավորման բալը, 100 բալային սանդղակով*	*Տոհմային կովի սերմնավորման ամսաթիվ*	*Տոհմային կովի սպասվող ծնի ամսաթիվը*	*Տոհմային կենդանու սեռապարիքային տարբերակումը (արու կամ էգ հորթ, արու կամ էգ մատղաշ, երինջ)*	*Տոհմային կենդանու ծննդյան ամսաթիվը*	*Տոհմային կենդանու կենդանի քաշը (կգ)*
1									
2									
3									
...									

Ընկերության տնօրեն _____

(ԱԱՀ)

Կ.Տ.

Ձև N 4

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ _____ շրջանում անասնաբուծության զարգացման և մթերատվության բարձրացման նպատակով տրամադրված տոհմային կենդանիների և դրանց պահվածքի գնահատականի մասին

Հ/Հ	Հայտատուի Ա.Ա.Հ. (անվանումը)	Գործունեության վայրը՝ համայնք, գյուղ	Հեռախոս	Տրամադրված տոհմային կենդանու համարը	Տրամադրված տոհմային կենդանու ցեղը	Տրամադրման ամիս, ամսաթիվ	Տվյալ կովից ծնված մատղաշների քանակը (գլուխ)	Պահվածքի գնահատականը	Ծանոթություն

Անասնաբուժական սպասարկման կայանի տնօրեն՝ _____

Ա.Ա.Հ.

Կ.Տ.

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՁԵՌՔԲԵՐՎԵԼԻՔ ՏՈՀՄԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԱՐԺԵՔԻ ՄԱՍՆԱԿԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 966-Ն, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-Ի N 331-Ն, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 38-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

<u>Անհրաժեշտությունը</u>

«Արցախի Հանրապետությունում ձեռքբերվելիք տոհմային կենդանիների արժեքի մասնակի սուբսիդավորման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 30-ի N 966-Ն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 23-ի N 331-Ն, Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 10-ի N 38-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ներկայացումը պայմանավորված է տեղական նախրի բարելավման և մթերատվության բարձրացման նպատակով Արցախի Հանրապետությունում ձեռքբերվելիք տոհմային կենդանիների արժեքի մասնակի սուբսիդավորման միասնական կարգ հաստատելու, ծրագրի իրագործման ընթացակարգում ի հայտ եկած ընթացակարգային թերությունները վերացնելու և տոհմային արու կենդանիների տրամադրման համաչափություն սահմանելու անհրաժեշտությամբ:

<u>Ընթացիկ իրավիճակը և խնդիրները</u>

Տոհմային կենդանիների արժեքի մասնակի սուբսիդավորման կարգերը հաստատվել էին կառավարության տարբեր որոշումներով, սուբսիդավորման կարգի շրջանակներում տոհմային կենդանիները տրամադրվում էին առանց սեռային սահմանափակումների: Սակայն ծրագրի իրագործման ընթացքում, ելնելով անասնապահների կողմից ձեռքբերվելիք տոհմային կենդանիների սեռից, առաջանում է մտավախություն սուբսիդավորման ծրագրի նպատակի չիրագործման համար:

<u>Նպատակը և բնույթը</u>

Սույն որոշման նախագծի հիմնական նպատակն է Արցախի Հանրապետությունում ձեռքբերվելիք տոհմային կենդանիների արժեքի մասնակի սուբսիդավորումն իրականացնել միասնական կարգի շրջանակներում, վերացնել ծրագրի իրագործման ընթացքում ի հայտ եկած ընթացակարգային թերությունները, ապահովել անասնաբուծության ոլորտում Արցախի Հանրապետության կառավարության նպատակային քաղաքականության իրագործումը:

Ակնկալվող արդյունքը

«Արցախի Հանրապետությունում ձեռքբերվելիք տոհմային կենդանիների արժեքի մասնակի սուբսիդավորման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 30-ի N 966-Ն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 23-ի N 331-Ն, Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 10-ի N 38-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման արդյունքում Արցախի Հանրապետությունում ձեռքբերվելիք տոհմային կենդանիների արժեքի մասնակի սուբսիդավորումն կիրականացվի միասնական կարգի շրջանակներում, կվերանան ընթացակարգային լուծում պահանջող որոշ խնդիրներ և տոհմային արու կենդանիները կտրամադրվեն սահմանված համաչափությամբ:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված անձինք

Նախագիծը մշակվել է Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի անասնաբուծության և անասնաբուժության վարչության և իրավաբանական բաժնի կողմից:

Այլ տեղեկություններ

«Արցախի Հանրապետությունում ձեռքբերվելիք տոհմային կենդանիների արժեքի մասնակի սուբսիդավորման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 30-ի N 966-Ն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 23-ի N 331-Ն, Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 10-ի N 38-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը սահմանված կարգով դրվել է հանրային քննարկման Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության պաշտոնական կայքէջում: Սահմանված ժամկետներում առաջարկություններ կամ դիտողություններ չեն ստացվել:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ ***Ժ. ՄԻՐԶՈՅԱՆ***

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՁԵՌՔԲԵՐՎԵԼԻՔ ՏՈՀՄԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԱՐԺԵՔԻ ՄԱՍՆԱԿԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 966-Ն, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-Ի N 331-Ն, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 38-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Արցախի Հանրապետությունում ձեռքբերվելիք տոհմային կենդանիների արժեքի մասնակի սուբսիդավորման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 30-ի N 966-Ն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 23-ի N 331-Ն, Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 10-ի N 38-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Արցախի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ ***Ժ. ՄԻՐԶՈՅԱՆ***

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՁԵՌՔԲԵՐՎԵԼԻՔ ՏՈՀՄԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԱՐԺԵՔԻ ՄԱՍՆԱԿԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 966-Ն, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-Ի N 331-Ն, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 38-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Արցախի Հանրապետությունում ձեռքբերվելիք տոհմային կենդանիների արժեքի մասնակի սուբսիդավորման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 30-ի N 966-Ն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 23-ի N 331-Ն, Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 10-ի N 38-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ ***Ժ. ՄԻՐԶՈՅԱՆ***

ԻՐԱՎԱԿԱՆ-ՖՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՁԵՌՔԲԵՐՎԵԼԻՔ ՏՈՀՄԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԱՐԺԵՔԻ ՄԱՍՆԱԿԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 966-Ն, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-Ի N 331-Ն, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 38-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

«Արցախի Հանրապետությունում ձեռքբերվելիք տոհմային կենդանիների արժեքի մասնակի սուբսիդավորման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 30-ի N 966-Ն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 23-ի N 331-Ն, Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 10-ի N 38-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չկան:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԵՎ.ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՔՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Որոշման նախագծի անվանումը՝

«Արցախի Հանրապետությունում ձեռքբերվելիք տոհմային կենդանիների արժեքի մասնակի սուբսիդավորման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 30-ի N 966-Ն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 23-ի N 331-Ն, Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 10-ի N 38-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին»

Նախագիծը ներկայացնողը՝

ԱՀ գյուղատնտեսության նախարարություն

ԱՀ կառավարության որոշումն ուղարկել՝

1. ԱՀ գյուղատնտեսության նախարարություն
2. ԱՀ արդարադատության նախարարություն
3. ԱՀ ֆինանսների նախարարություն

Նախագիծը պատրաստողը՝

Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի անասնաբուծության և անասնաբուժության վարչություն

_____

(ստորագրությունը)